Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ ԱՐՄԵՆ ԽՈՍՏԻԿՅԱՆԻ ՍԳԱԿԻՐ ԸՆՏԱՆԻՔԻՆ

Ցավով և խորին ափսոսանքով տեղեկացանք հայ թատերական արվեստի կրած ծանր կորստի՝ անվանի դերասան Արմեն Խոստիկյանի մահվան մասին:

Կյանքից հեռացավ մեր ժողովրդից սիրված ու գնահատված տաղանդաշատ դերասանը, ով թատերական բեմերում և կինոֆիլմերում մարմնավորած իր դերերով սերունդների մեջ դաստիարակել է առ հայրենին սեր ու նվիրում և դժվարությունները ծիծաղով հաղթահարելու լավատեսություն: Արմեն Խոստիկյանը ծանրաբեռն իր վաստակով հավերժ պիտի ապրի հայ սերունդների հիշողության մեջ:

Ծանր կորստյան այս պահին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, հանուն Գերագույն Հոգևոր Խորհրդի և Սուրբ Էջմիածնի միաբանության, Մեր վշտակցությունն ենք բերում հանգուցյալի ընտանյաց անդամներին և բոլոր հարազատներին:

Միածնի Իջման Սուրբ Սեղանի առջև աղոթում ենք առ Բարեգութ և Ողորմածն Աստված, որ երկնային երանական Իր հանգրվաններում խաղաղության ու լույսերի մեջ ընդունի հանգուցյալի հոգին և Սուրբ Հոգու շնորհով մխիթարություն ու սփոփանք պարգևի նրա ընտանիքին և բոլոր մերձավորներին:

Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի. ամէն:

Վշտակից սիրով և օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
24 հուլիսի 2003 թ.